

ՍՈՑԻԱՅԻ ԿԻՐԻԼ ԵՎ ՄԵԹՈԴԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՈՍՄԱՆՅԱՆ ԴԻՎԱՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Այս միջնադարի սոցիալ-տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքի ուսումնասիրության համար առավել հավաստի աղբյուրներ են հանդիսանում պետական-վարչական բարձր և ստորին դիրձանատներում, կրոնական-եկեղեցական հաստատություններում և իշխող դասի անձնական դիրձաններում պահպանված պատմական վավերագրերը:

Հայ ժողովրդի պատմության XV—XVIII դդ. գիտական համակողմանի հետազոտմանը մեծ չափով նպաստում են ինչպես իրանական, այնպես էլ օսմանյան արքայական հրովաբառակներն ու շարխաթական-իրավական փաստաթղթերը։ Արևելագիտական շրջանակներին արդեն ծանոթ են այս ընգամյալառում նստադարձման տասնամյակներին կատարված բնագրագիտական աշխատանքների արդյունքները, որոնց շնորհիվ լայն շրջանառության մեջ գրվեցին բազմամթիվ արժեքավոր փակղագրերի գիտական հրապարակումներ՝ մեծ չափով նպաստելով նշված հարյուրամյակների քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության կարևոր հարցերի լուսաբանմանը։

Այս առումով, մեղմանում առավել արդյունավետ են եղել պարուկերեն բնագրերի հրապարակման ուղղությամբ կատարված աշխատանքները, և դա հիմնականում այն պատճառով, որ Արևելյան Հայաստանը իրանական տիրապետության տակ գտնվելու պատճառով էձմիաձծի կաթողիկոսական դիպանում և Արևելյան Հայաստանի մյուս վանքերում պահպանված վավերագրերը պարսկերեն են, իսկ թուրքական վավերագրեր կամ կաթողիկոսներին ու նրանց նվիրակներին տրուած ինտրաքեր են և կամ՝ ասմանյան զորքերի կողմից Անդրկովկասի կարճատև նվաճումների շրջանին վերաբերող վավերագրեր, որոնք ևս թիվ չեն կազմում:

Պետք է ասել, սակայն, որ օսմանյան պատմական վավերագրերի գիտական հրապարակման ուղղությամբ և՛ թուրք մասնագետների, և՛ արևմտանկրթական թուրքագետների կողմից կատարյալ աշխատանքները ավելի մեծ ընդգրկում ունեն², Ուշագրության արժանի են նաև Վրաստանում կատարված հրապարակումները՝

Արևմտյան Հայաստանում ալեխի բան 400-ամյա օսմանյան տիրապետության շրջանի դի-
մանական վավերագրերի, հատկապես հայկական համայնքների վերաբերող փաստաթղթերի հա-

¹ Տե՛ս է. Գ. Փ ա փ ա ղ յ ա ն. Մատենադարանի թուրքերեն լավերագրերի աղյուսագիր-
տական արժեքը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 89—98; ն ու յ ն ի՝ Վա-
ղարշապատ պոլդի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցանիսը.—«Բանբեր Մատենադա-
րանի», № 5, Երևան, 1960, էջ 431—464; Հայերի դերը թուրքիայի մետաքսագործության մեջ
և 1729 թ. թալիքդուս կնքված համաձայնագիրը.—«Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան,
1969, էջ 241—253:

² Առավել կարևոր հրապարակումներից կարելի է հիշել. Օ. Լ. Barkan, XV ve XVI-Inci asırlarda Osmanlı İmparatorlugunda zirai ekonominin hukuki ve mali esasları, I cild „Kanunlar“ (*այսուհետև* Օ. Լ. Barkan, „Kanunlar“). İstanbul, 1943, Fahri Daisar. Türk sanayi ve ticaret Tarihinde Bursada İpekçilik. İstanbul, 1960, L. Fekete. Die styaqat-schrift in der Türkischen Finanzverwaltung. Budapest, 1955: Kechunhsbucher Turkischer Finanzstellen in Buda (ofnn). Budapest, 1962, M. Guboglu. Paleografia si diplomatia Turco-osmana. Bucuresti, 1958; А. Траянов Велко Османотурски документи о финансово съдържание 16—18 вв., София, 1977.

³ დქრ მფვლ ვლაიტ კორეასტან⁴, თორკჯე მთნი ტრჯმე ვადიყი ვ ლხშიჲ
۱۹۴۷ . ს . ა . ბ . გ . დ . ე . თ . ი . პ . რ . ს . ყ . შ . ჩ . ც . ქ . ჯ . ო . ფ . უ . ზ . წ . ჳ . რ . ს . უ . ჵ . ჶ . ჭ . ღ . ഈ . ინ . ისრაელი . და
არუზის ცინებების შესახებ (XVII—XVIII), გამოსაცემად მოამზადა ნოდარ შენგელამ, თბლისი,
1982. ჩიოღდირის ეიალებს ჟაბა დავეთმა 1694—1732 წწ. გამოსცემად მოამზადა (ესანა
აბულფათი, თბლისი, 1979.

րուստ ժողովածուներ կան Պոլսի և Երուսաղեմի պատրիարքարանների արխիվներում, որոնք սարք մասնադիտական ուսումնասիրության չեն ենթարկվել: Իսկ բուն Հայաստանի կրոնական ֆաստատոյությունների, թեմական առաջնորդարանների ու վանքերի արխիվները մեծ մասամբ ոչնչացան մեծ Լեռնի օրերին:

Մեծ է Օսմանյան կայսրության մայրաքաղաքի Արքունի դիվանատներում հարյուրամյակների ընթացքում կուտակված վիթխարի քանակությամբ վավերագրերի նշանակությունը, որի արխիվային մշակման ենթարկված փոքր մասից կուտակված հրապարակումները թեև, ինչպես տեսանք, բավական շատ են, սակայն առկա նյութի շատ չնչին տոկոսն են կազմում: Պետք է նշել նաև, որ արխիվային գրանցման ենթարկված վավերագրերից օգտվելու հնարավորությունները ևս խիստ սահմանափակ են և այսօրվա դրությամբ գրանցից օգտվելը մեծ դժվարությունների հետ կապված:

Իրերի բերմամբ, օսմանյան Արքունի դիվանատան վավերագրերի մի մեծ զանգված, որն առկա է թի. խառն տարիներին, պատահականորեն հայտնվել է Բուլղարիայում և այժմ տրվելով իրիլ Լ. Մեթոդի ժողովրդական գրադարանին, տեղ գտել Արևելյան բաժնի արխիվում: Այս վավերագրերի նկատմամբ գիտական հետաքրքրությունը սկսվեց 1950-ական թթ. հետո, երբ Բուլղարիայի Ծղոփողական Հանրապետության կառավարության հոգատարության շնորհիվ Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանը ընդարձակվելով դարձավ երկրի մշակութային և դիվանական խոշորագույն կենտրոններից մեկը: Այստեղ հավաքված երիտասարդ թուրքագետներին հանձնարարվեց սխտեմատիկ արխիվային մշակման ենթարկել և ցուցակագրել հարյուր հազարավոր փաստաթղթերի ժողովածուն: 1960-ական թթ. վերջերին միայն ի մի բերվեցին կատարված աշխատանքները, որից հետո հնարավոր դարձավ զասակարգել վավերագրերն ու կազմել համառոտ ցուցակներ:

Անհրաժեշտ դարձավ Բուլղարիա գործող ե մասնագետ թուրքագետների՝ սկսելու համար այդ հատուկ արխիվային ֆոնդերի աղբյուրագիտական ուսումնասիրությունը: 1982 թ. հուլիսին կրտսեր գիտաշխատող Ն. Դևորգյանի ընկերակցությամբ մեկնելով Բուլղարիա, մենք հնարավորություն ունեցանք գրադարանի Արևելյան բաժնի վարիչ Ս. Անդրեի և սպասարկող անձնակազմի սիրալիր գործակցությամբ տեղում ծանոթանալու վավերագրերի այս մեծաթվեք ժողովածուին:

Մի քանի հարյուր հազար պատմական վավերագրերի այս հսկայական զանգվածում առկա են Օսմանյան կայսրության, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Ղրիմ ու Հյուսիսային Կովկաս և Կենտրոնական Եվրոպայից ու Բալկաններից մինչև Պարսից ծոց ու Արաբական թերակղզին ձգվող համընդ տարածքին վերաբերող բազմաթիվ վավերագրեր, որոնք, բաժնի աշխատակիցների երկստամյա ջանքերի աշխատանքի շնորհիվ, աշխարհագրական խմբավորման են ենթարկված և առհարկված առանձին ֆոնդերում: Դա հնարավորություն տվեց մեզ կարճատև ժամանակամիջոցում աչքի անցկացնել առաքական բազմաթիվ խրթին դրություններով զրկված ավելի քան 6000 տարբեր բովանդակության վավերագրեր (շուրջ 10 000 թերթ), տեղում վերծանելու և ընդօրինակելով բազմաթիվ կարևոր վավերագրեր և կատարելով առավել արժեքավորների պատճենահանումներ:

Նոտավոր ճշգրտությամբ կատարված հաշվումներով, տարբեր ֆոնդերում գրանցված միջ հետաքրքրող վավերագրերի ընդհանուր թիվը մոտ 30 000 է (շուրջ 76 000 թերթ), որից 11 500 արխիվային միավորներ (30 000 թերթ) անմիջապես վերաբերում են Պատմական Հայաստանին (ներառյալ նաև Արևելյան Հայաստանը), իսկ 18 000 միավոր (46.000 թերթ) Կիլիկիային և Օսմանյան կայսրության այլ հայաշատ նահանգներին: Արևմտյան Հայաստանին վերաբերող վավերագրերը կենտրոնացված են Էրզրումի, Վանի, Կարսի, Զլզրի, Թուրքի, հարբերդի, Դիարբեքի, Բաղլարի, Ֆոնդերում: Հայերի մասին զգալի նյութ կա նաև Սեբաստիայի, Կեսարիայի, Նախաթիայի, Մարաշի, Ազանայի, Անթարի, Ամասիայի, Անտիոքի, Եղեսիայի, Իկոնիայի, Հալիպի, Տրապիզոնի, ինչպես նաև Քյոթահիայի, Ղրիմի, Զմյուռնիայի, Բերբերդաղի (Ռոդոստո), Երուսաղեմի և այլ ֆոնդերում:

XVI—XIX դդ. ավելի քան 300-ամյա մի ժամանակաշրջան ընդգրկող բազմահազար վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող փաստաթղթերը: Առանձնապես կարևոր են պետական պաշտոնությունների ու գիտությունների ոլորտից որպես ռոնիկ տրվող ավատների «դիմանքների» և «թիմարների» հրամանագրերն ու «դեֆթերները», որոնց մեջ մանրամասն թվարկված են գյուղական համայնքներից և հարկատու օբյեկտներից գանձվող հարկերի ընդհանուր գումարները կամ «մուկաթիա»

4 Ստանալետների կարծիքով Ստամբուլի պետական արխիվներում գտնվող վավերագրերի թիվն անցնում է 1,5 միլիոնից:

ներքո՝ Աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում XVII—XIX դդ. էրզրումի, Ղազսի, Լանի, Մուշի, Դերջանի, Բիթլիսի և այլ քաղաքների արհեստավորներից և առևտրական դասից դանձառ դարկերի ղուցակները և մեծածախ ու մանրածախ գների ռեկամենտներն ու հարկային տարիֆները, ինչպես նաև մարսատների, փողեռանոցների և այլ պետական եկամտաբեր հաստատությունների վաճառվածքները վերաբերող պայմանագրերն ու պարտավորագրերը։ Առանձին ուշադրության արժանի են նաև բերդապա՝ կալադորների ոռոգակացուցակներն ու ոռոգիկների հատուցման հանձնարարագրերը։ Մեծ է հատկապես գլխահարկին կամ ջիղջային վերաբերող վավերագրերի նշանակությունը թե՛ հայ աղղարնակչության վրա դրված հարկային այդ ծանր ու մեծադուստր պարտավորության հարստահարիչ բնույթի ուսումնասիրության և թե՛ առանձին վարչական միավորների սահմաններում հայության ընդհանուր թիվը պարզելու տեսակետից։

Արխիվում ուրույն տեղ են զբաղում Խոանի, Թբիլիսիի և Երևանի ֆոնդերում գրանցված, XVII դարուս օսմանյան զորքերի կողմից Անդրկովկասի և Իրանի հյուսիս-արևմտյան նահանգների նվաճման շրջանի (1724—1736 թթ.), ինչպես նաև 1780-ական թթ. պաշտոնական վավերագրերը, որոնք նոր լույս են սփռում դարաշրջանի պատմության վրա և չափազանց կարևոր նշանակություն ունեն Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների և Ռուսաստանի հետ միավորման համար մղած հերոսական պայքարի պատմության բաղմամբիվ հարցերի լուսաբանման համար՝

«Հանդեսի» էջերում հնարավոր չէ սպառել խոսք ասել իշխալ ֆոնդերի՝ Արևելյան Հայաստանին վերաբերող բոլոր արխիվային միավորների մասին։ Ստորև կփորձենք բնութագրել միայն 1724—1736 թթ. նվաճումների շրջանի վավերագրերը՝ կանգ առնելով հատկապես Արարատյան երկրում թուրքական իշխանությունների ռազմաքաղաքական և ֆինանսահարկային համակարգի առանձնահատկությունների լուսաբանմանը նպաստող առավել կարևոր մի քանի վավերագրերի վրա։

Այս ֆոնդերի ընդհանուր բնութագիրը տալիս հատկանշական պետք է համարել այն փաստը, որ այնտեղ գրանցված վավերագրերը վերաբերում են օսմանյան զորքերի կողմից տարբեր մասնականամիջոցներում նվաճված Թբիլիսիին, Երևանին, Նախիջևանին, Օրդուբադին, Գանձակին, Նասախուն և շրջակա վայրերին, իսկ Ղարաբաղին ու Զանգեզուրին վերաբերող մեկ փաստաթուղթի անգամ գոյություն չունի։ Իսկ դա հաստատում է այն իրողությունը, որ շնայած բազմապատիժի պերագանց ուժերին, նվաճողներին չի հաջողվել տեղականորեն ընկճել Սղնախների և Ղախանի գինեգլու հայության հերոսական դիմադրությունը և թափանցել Սյունյաց և Արցախի ներքին գանձառնելու Ուշագրավ է նաև, որ Օրդուբադին վերաբերող վավերագրերի առկայությունը և հից գտնվող Մեղրուն և շրջակայքին վերաբերող վավերագրերի խսկառ բացակայությունը գալիս է նպաստելու Դավիթ-Բեկի պատմության որոշակի վկայությունը այն մասին, որ 1727 թ. Մեղրին գրաված օսմանյան զորքերին չափաքանիչ պարտության մատնելուց, կոտորելուց և Մեղրու բերդը գրավելուց հետո Դավիթ-Բեկի դիմադրությունը այրել ու ոչնչացրել են նաև թուրքական օկուպացիոն իշխանությունների կազմած Մեղրու և մոտակա շրջանների հարկացուցակները՝

Արևելյան Հայաստանին վերաբերող վավերագրերի բնութագրության մեջ առաջին հերթին անհրաժեշտ է ընդգծել դրանց բացառիկ նշանակությունը որպես օսմանյան իշխանությունների ուրույնի նվաճողական նկրտումների և նվաճված վայրերի բնակչության նկատմամբ կիրառվող համատարած կոդուպուտի և հարստահարության հետևողական քաղաքականության մասին վկայող անհերքելի փաստաթղթեր։ Այս առումով հատկանշական է հիշել 1135 թ. շաբաթ ամսի 29-ին

«Առկա են սահմանամերձ էալեթների փաշաների՝ Անդրկովկասի քաղաքական իրավիճակի մասին Արքունի դռանը ներկայացված մանրամասն պեկուցագրերը, որոնց մեջ ուշագրավ տվյալներ կան Հերակլ II-ի կամ սահմանամերձ խանությունների ու ռուսական արքունիքի միջև առկա ունեցող բանակցությունների, Գաղստանի թուրքամետ իշխողների միջոցով օսմանյան ուղծակալների ծավալած հակառուսական ակտիվ գործունեության վերաբերյալ։ Ուշադրության արժանի են նաև խաներին հղված գրությունների պատճեններն ու դրանց պարսկերեն պատասխանների ընթացիկը և այլ փաստաթղթեր։ Նախատեսված է առաջիկայում առանձին ուսումնասիրության ենթարկել վավերագրերի այս խումբը և տպագրության պատրաստել մի քանի առավել արժեքավոր վավերագրերի բնագրերն ու թագմանությունները։

«Գալիթ բեկ կամ «Պատմություն Ղախանցուց», աշխատասիրեց Հ. Սամուել վրդ. Արամյան. Վենետիկ, Ս. Ղազար, 1978, էջ 172—173 «...գրեռն հարկահանին բացին և անդ երեսուն և երկու հազար թուղթս հարկաց գտին և զայն ամենայն ի հուր այրեցին»։

(1723 թ. հունիսի 4) դեպի Թբիլիսի արշավող օսմանյան զորաբանակի հրամանատար, էրզրումի իբրահիմ փաշայի շտաբին առնթեր, Շարի ատյանում կազմված արձանագրությունը, ըստ որի Չըլզերի էյալեթի Օրուջայա կոչվող բանակատեղում փաշային են ներկայացել Կադուլիի մահալի (ՀՍՍՀ Ամասիայի և Ղուկասյանի շրջաններ) 31 գյուղերի հայ քաղաքացիները և պարտավորվել նույն թվականից սկսած, երեք տարի շարունակ ստորին չիգյա (գլխահարկ) վճարել օսմանյան իշխանություններին, որից հետո արդեն պիտի վճարեն ընդունված կարգով, այսինքն երեք տարին, միջին և բարձր սակերով: Բացի դրանից հիշյալ գյուղերի հայ համայնքներին պարտադրվել է հողային հարկի (խաբաջ-ի մուվազզաֆա) և օրինական տուրքերի (ռուսում-ի կանունիյա) սլարբերական հատուցումը, որից հետո միայն նրանց «աման» է շնորհվել, այսինքն կանխվել է այդ շրջանի ասպատակումը, կողոպուտն ու գերեվարությունը դեպի Թբիլիսի արշավող զորքերի կողմից:

Շարիաթական այս արձանագրությանը կամ մահալարին առնթեր սկսված են նաև Իբրահիմ փաշայի՝ այս կապակցությամբ արթունքին ներկայացրած ղեկուցագրին ու սուլթանական դիմանից ստացված արտոնագիր-հրովարտակը (բերաթ): Վավերագրերի շարադրման եղանակից և բովանդակությամբ ընդհանուր տրամադրությունից պարզ երևում է, որ Անդրկովկասի նվաճման նպատակով արշավանքի ելած օսմանյան զինվորականության գերագույն հրամանատարությունը, սկզբնապես վարելով մեղմ քաղաքականություն, դիմանագիտորեն ձգտում էր առերևույթ զիջողական վերաբերմունքով կանխել բնակչության հավանական դիմադրության փորձերն ու խռովությունները: Նույն ժամանակների այլ վավերագրերի համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի ճշգրտակիցորեն խոսելու հրամանատարության վարած արտոնական քաղաքականության մասին:

Ինչպես տեսնել, Կադուլիի հայ համայնքների հետ համաձայնությունը կայացել է օսմանյան զորքերի հարձակման հենց առաջին օրերին (1723 թ. հունիս), որով և կանխվել է դիմադրությունն ու ուղի հարթվել դեպի Թբիլիսի զորքերի անարգել առաջխաղացման համար: Իսկ ահա, 1725 թ. դեկտեմբերին, երբ արդեն գրավված էին Թբիլիսիի և Երևանի բերդերը և օսմանյան հրամանատարությունը պատրաստվում էր վճռական զործողությունների անցնել՝ ճնշելու համար Սղնախների ու Ղափանի զինվորված հայության դիմադրությունը, Արթունի դիվանին ուղղված պաշտոնական ղեկուցագրով Երևանի ղեկավարը հայտնում է այն մասին, որ «Երևանի ենթակա վայրերից Զարուգրիլի նահիան (ՀՍՍՀ Վարդենիսի շրջան), Նախապես սանջաքի իրավունքով տրված է եղել Օմար փաշային: Սակայն, երբ Աստուկ կամքով պատուհասի ենթարկվել, ռայաթները սարսափի ներքո միացան Սղնախի անհավատներին ու թեև հետո նորից հնազանդվելու ցանկություն ունեցան, սակայն, քանի որ նրանց խրտումն ու կատաղությունը դեռ չի ունցել, առայժմ նպատակահարմար է դիտվել նրանցից պահանջվող ուշուրն ու ռեմար (տասանորդ ու տուրք) անտես առնել և բավարարվել միայն չիգյայի գանձումով»:

Պատմական կարևոր այս փաստաթուղթը, որ վերաբերում է Գեղարքունյաց երկրի հարավարևելյան շրջաններին, մեծ արժեք է ներկայացնում նաև XVIII դարի առաջին կեսի հայ ազատագրական կռիվների ծավալման ու աշխարհագրական սահմաններին վերաբերող հարցերի լուսաբանման տեսակետից:

Պարզ է, որ 1725 թ. վերջերին, երբ Արցախում ու Սյունիքում կռիվները դեռ շարունակվում էին, հսկայական զոհեր խլելով և ծանր կորուստներ պատճառելով նվաճողներին, կիսով չափ հնազանդված շրջաններում օսմանյան հրամանատարությունը հանդես էր գալիս խաբուսիկ, մեղմ հարկային քաղաքականությամբ: Նպատակ ունենալով այդ ձևով աստիճանաբար համոզել մարտնչող զինվածներին՝ վերջ տալու դիմադրությանն ու ապավինելու նվաճողների ողորմածությունը:

Կարծում ենք, որ բոլորովին էլ պատահական չէ Արարատյան երկրի կենտրոնական դաշտում և Երևանի վերաբերյալ այս կարգի փաստաթղթերի բացակայությունը: Դեռևս 1960 թ. Նատենադարանի «Բանբերի» 5-րդ հատորում հրապարակված Վաղարշապատի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակներից պարզ երևում է, որ Երևանի էյալեթի մանրամասն աշխարհագիրը կատարվել է Երևանի գրավումից հետո միայն, որը տեղի է ունեցել 1724 թ. հունիսին:

7 Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի արխիվ (այսուհետև ԿՄԺԳԱ), ֆոնդ ДАК, վավ. 198/14:

8 Նույն տեղում, վավ. 268:

9 Հ. Փափուլյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները.—«Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 437:

Վաղարի և շրջակա գյուղերի հայ բնակչության հերոսական դիմադրությունը արյան մեջ խնդրելուց հետո էր, որ գործի զրվեց դաժան հարկապահանջության հարյուրամյակների մեծ փորձ ունեցող ֆինանսական-հարկային ապագատը, կազմելու համար հաստակեցված զյուղերի ու սպանների մանրամասն հարկացուցակները:

Բնորոշ է, որ հենց սկզբից էլ կիրառվել է կայսրության բոլոր երկրամասերին հատուկ հարկային համակարգը, հաշվի առնելով նաև տեղական առանձնահատկություններն ու ավանդույթները¹⁰։ Այս հանգամանքը հաստատվում է նաև Օ. Լ. Բարթանի հրատարակած՝ Գանձակի վիլայեթի նույն թվականների «Կանոննամեում» նշված մանրամասներով, որտեղ վկայակոչված են կրդըլուշների օրոք ընդունված հարկային նորմերը¹¹։

Ինչպես ժամանակին նշել ենք, այստեղ ևս խիստ հատկանշական է, որ ընդամենը երեք տարի անց, երբ օսմանյան զորքերը որոշ հաջողություններ ունեցան Սղնախների և Դավիթ-Ռեկի ղեմ մղված կռիվներում, ձեռնարկեցին նոր աշխարհագրի և 1728 թ. վերջերին կազմելին նոր ընդարձակ հարկացուցակներ (դեֆաթիր-ի մուֆեսսել), որտեղ բնակչությունից գանձվող հարկերի ու տուրքերի ընդհանուր դրամական համարժեքը, 1725 թ. հարկացուցակի համեմատությամբ, ավելացված էր 2,5 անգամ:

Կիրի և Մեթոդի ժողովրդական գրադարանի Երեանի ֆոնդում պահվող, Արարատյան երկրից ստացվող եկամուտների մասին 1725—1731 թթ. Երեանի բերդի դեֆթերդարների կողմից Արարտի դիվանատան գլխավոր հաշվապահությանը (բաշ մուհասիբա) ներկայացված ելումուտի հաշվեկշիռներն ու զեկուցագրերը բացառիկ արժեքավոր մանրամասնություններ են հաղորդում բնակչության տարբեր խավերից և եկամուտներ հաստատություններից գանձվող հարկերի ու տուրքերի և պուղական բնակչության վրա բարդված հացահատիկի և այլ սննդամթերքների պարբերական մատակարարումների վերաբերյալ:

Չհաշված բազմաթիվ ստացական-անդորրագրերն ու շրջակա գյուղական համայնքներից Երեանի բերդի պահեստները կատարված մթերումների մասին եղած տեղեկանք-վկայագրերն ու հարակից այլազան գրությունները, պահպանվել են բերդի գանձատան (խաղինա) ելից և մտից մի քանի հանգամանակից ցուցակներ (դեֆթեր-ի մուկաթիաթ), որոնց համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի որոշակիորեն բնութագրել նորանվաճ վայրերում սկուպացիոն իշխանությունների վարած տնտեսական-հարկային քաղաքականությունը։ Այս առումով, առավել պերճախոս տվյալներ է պարունակում հիշերթի 1137 և 1138 (1724—1726) թթ. Երեանի բերդի մուհասիբի (բերդապահ կայազորի հրամանատար) Ռաջաբ փաշայի, դեֆթերպար Սուլեյման էֆենդիի և ուղեւամի (հաշվետար) Մուհամմատ էֆենդիի կողմից Արարտի վիլայի գլխավոր հաշվապահությունը Մուֆթադաթի դեֆթերի (մայր հաշիվ) հիման վրա ներկայացված՝ հիշյալ թվականների ելից և մտից մանրամասն հաշվեկշիռը, որն ինչպես ասվեց, ընդունված էր կոյել «Դեֆթեր-ի մուկաթիաթ»¹²։

Դեֆթերը քաղկացած է երեք մասից. ա) Մուկաթիաների եկամուտները (իրադ-ի մուկաթիաթ), բ) ծախսեր (մեսարիֆ), գ) մուծումներ պետական գանձարան (հեալաթ ան մալ-ի իրասալ-ի խալինա)։ Եկամուտների մասում նախ տրված է առաջին մուհասիբի վեզիր Ահմադ-փաշայի օրոք 1724 թ. հաստատված մուկաթիաների ցուցակը, ըստ որի պարզ է դառնում, որ Երեանի գրավումից անմիջապես հետո, սկզբնապես հաշվառման են ենթարկվել միայն կրթաբուհի, Կարպի, Գառնի, Շարուրի, Սուրմալուի, Դարաշիլագի, Դարալագյազի նահիաների մուկաթիաները, և այսպեղ մուկաթիաներ են նշանակվել նաև Սաղարակի ու Աղջաղալայի մարաստներում ու Կոզրի աղահանքերում, որոնց ընդհանուր զումարը կազմել է 55870 զուրուշ կամ ասլանլու («զուրոթ-ի ասադի») — առյուծով զլտա)։ Այնուհետև տրված է 1725—1726 թթ. հաջորդ մուհասիբի վեզիր Ռաջաբ-փաշայի օրոք կազմված մուկաթիաների ցուցակը, որտեղ նախորդ ցուցակում հիշված մուկաթիաներին ավելացել են Գուզալի օջաքլըքի, Նախիջևանի կազալի, Աստապատի, Շորադալի, ինչպես նաև միլարություն (չրբաշխության), Երեանի մաքսատան (գյումրուպի), ներկատան, օճառանոցի, սպանդանոցի և էջմիածնի վանքի մուկաթիաները, որով ընդհանուր զումարը դարձել է 197370 զուրուշ, այսինքն նախորդ մուկաթիաների զումարից շուրջ 3,5 անգամ ավելի:

¹⁰ Նույն տեղում, էջ 439:

¹¹ Օ. Լ. Բարթան, «Kanunlar», s. 195—197.

¹² ԿՄԺԳԱ, ֆոնդ 327, վավ. 37:

Հայերից գանձվող զլխահարկը՝ ջիզյան, տրված է առանձին, որի ընդհանուր գումարը ուսաջին գանձման ժամանակ եղել է 36915, իսկ երկրորդ գանձման ժամանակ՝ 75080 ասլանլու։ Երկու գանձումների ընդհանուր գումարն է 111995 ասլանլու։ Այս գումարից 5490-ը վճարել են ունևորները, 3160-ը միջակները, իսկ 103045-ը՝ շքավորները։ Զիզյայի գումարների մանրասանս վերլուծությունը կարող է առանձին ուսումնասիրության։ Այն կարևոր է հալ ազգարդ։ Կակչության ընդհանուր թվաքանակին է սոցիալական վիճակին վերաբերող հարցերի պարզաբանման համար։ Սակայն առաջին հայացքից դժվար չէ նկատել, որ եթե սկզբնական գանձման ժամանակ, ջիզյա վճարող չափահաս հայերի թիվը 14317 շունչ էր, որից 79-ը ունևոր, 212-ը միջակ է 14026-ը շքավոր, ապա երկրորդ գանձման ժամանակ 28138 շնչից 470-ը ունևոր է, 480-ը միջակ է։ 27188-ը շքավոր։ Այսինքն երկրորդ ցուցակագրության ժամանակ ունևորների թիվն անել է վեց անգամ, միջակներին՝ 2,26 և շքավորներին՝ 1,22 անգամ։ Հստ որում, նշումում են նաև ջիզյայի վերին, միջին և ստորին (ալա, օվսաթ, աղնա) նորմերը՝ տարեկան 10, 5 և 2,5 ասլանլու կամ դուրուշ։

Այնուհետև եկամուտների մեջ նշված են նաև Երևանում և Նախջևանում սեփականատերերի բացառությամբ պատճառով պետականացված (միլի դարձված) կալվածների վստաքից գույացու գումարները՝ 27521 դուրուշ, վախճանված քաթիր Մուհամմադ էֆենդու մոտ հայտնաբերված, բնակությունից գանձված գումարների մնացորդը՝ 14608 դուրուշ, ինչպես նաև տեղում հավաքագրված շարքային զինվորների (երևու նաֆարաթ) համար նախատեսված, սակայն չհատուցված ռոճկագումարները՝ 13317 դուրուշ, որոնց գումարը լինում է 57496, իսկ եկամուտների ընդհանուր գումարը դառնում է 412005։ Սրանից տեղում կատարված ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 16677 դուրուշ, որի 2/3-ից ավելին բերդապահ կայսերի ուժերին են են սնունդի համար (միս, հաց, գարի և այլն) հատկացված գումարները։ Պրանցումները կատարված են բավական մանրամասն, նշելով զորքերի բոլոր տեսակներն ու յուրաքանչյուրի ուժերի հատուցման չափն ու ժամանակը։ Կան նաև նշումներ Ղարսում գնված հացատիրի Շորապալի վրայով Երևանի բերդի պահեստները տեղափոխելու համար սալապաններին տրված փոխադրավարների մասին։

Մնացյալ գումարի 80 տոկոսից ավելին բերդի վերանորոգման, խանդակների փորման և այլ ամրությունների՝ զորանոցների, պահեստների ու պահակատների (քեբեխանե, կարաուխանե) կառուցման, ինչպես նաև հրետանու պարագանների (լեվազիմ-ի թոփխանե) հայթայթման համար կատարված ծախսերն են։ Հիշվում են տարբեր մասնագիտություն շինարարներ, միմյուր (նորտուրապետ), բաննա (որմնադիր), դաշքյասան կամ դաշի (քարգործ), նաջար (հուսն), ահնգեր (երկաթագործ), սևադործ բանվորներ (ռանջբարան) և այլն։ Շինարարական աշխատանքները ղեկավարել է արքունի ճարտարապետ (միմար-ի խասսա) Մուստաֆա-աղան։

Հաշվետվության երրորդ է վերջին մասն, ինչպես ասվեց, վերաբերում է Արքունի գանձատուն կատարված մուծումներին, որոնք հիմնականում իրացվել են վերուստ կատարված ցուցումների համաձայն՝ փոխանցումներով (էվամիր-ի ալիյե իլե հևալե օլունան)։ Հաշվապահական ճշգրտությունը և մանրամասն բացատրություններով կատարված ելից գրանցումները ցույց են տալիս, որ Երևանի գանձատան (խազինա) վրա ծանրացած է եղել ոչ միայն Երևանի բերդապահ կայսերի, այլև էրզրումի, Վանի, Թրիխսիի, Գորիի, Լոուու և այլ բերդերի ենթերակա բերդապահ՝ զորամասերի (մուհաֆիդին-ի կալա) ռոճիկների հատուցման պարտավորությունը։ Ինչպիսի, հրահանգված է եղել Երևանի գանձատան գումարներով տեղում կատարել հացահատիկների և այլ մթերքների մեծաքանակ գնումներ՝ ապահովելու համար էրզրումի բերդի ձմեռային պաշարները (զախիրարիհ-ի զիմսթանի)։ Բազմաթիվ հանձնարարագրերով գումարներ են հատկացվել նաև Անատոլիի և էրզրումի վալիներ, սարասկարներ՝ Մուստաֆա փաշաների հրամանատարության ներքո ղեկավարվող, Համադան, Սպահան և Գանձակ արշավող զորությունների ուժերին հատուցման և պարենամթերքների ձեռք բերման համար։

Ի մի բերելով հաշվեկշռի տվյալները, ղեֆթերի եզրափակիչ զեկույցում ասված է, որ Երևանի գանձատան 1137 է։ 1138 (1724—1725) թթ. եկամուտներից բերդապահ կայսերի անձնակազմի ուժերին է այլ ծախսերի հաշվին գրանցված 166777 դուրուշից բացի, թեև նախապես արված հրամանի համաձայն որոշված է եղել մնացյալ 245228 դուրուշը մուծել պետական ցանձարի, ուսկայն այս ընթացքում ստացված հանձնարարականների և հրահանգների հիման վրա 241810 դուրուշ վերը նշված կարգով փոխանցվել է ուր որ անկ է, և այժմ դրամարկղում կանխիկ կա միայն 2400 դուրուշ։

Ինչպես տեսանք, Երևանի նվաճումից ընդամենը մեկ ու կես տարի հետո, Ռաջար փաշայի

և ունի փրկության օրոք կազմված ելից և մտից (իրադաթ վե մասարիֆ) ղեֆթերը օսմանյան Կուսպացիոն իշխանությունների՝ նվաճված երկրամասերում վարած հարկային քաղաքականության հարստահարիչ ընդվթը բացահայտող եզակի մի փաստաթուղթ է, որը, միաժամանակ, հարադրված լինելով վարչական ապարատում հարյուրամյակներ ի վեր կիրառվող հաշվապահական սկզբունքներով, կայսրության վաղատնտեսական համակարգի ուսումնասիրության առավել հավաստի սկզբնաղբյուրների շարքը կարող է դասվել:

Նույնօրինակ բովանդակությամբ և խոստովանում են նաև 1730-ական թթ. մուկաթիայի ղեֆթերներն ու հարկերի հատումները վերաբերող մյուս պաշտոնական վավերագրերը, որոնց մեջ ավելի մանրամասն են արձանագրված Առաքատյան երկրի գյուղական համայնքներից գանձվող բնամթերքների քանակն ու դրանց դրամական համարժեքները: Ուշագրավ տվյալներ են հաղորդված Կատկաս Ուլբիլիսայի (Վաղարշապատ), Քանաքեռի, Բշնիի, Արզականի, Ջագավանքի, Առինջի, Արզնիի, Գյամբեղի, Ճաթղոսնի, Սամաղարի, Աղավնատան, Նագրեանի, Գյոզ-գյում-րեթի, Դառնիի, Չոլմազլիի (Նորթ), Նորագեղի, Շենգավիթի, Կարպիի, Սաֆիաբաղի, Մուլաբայաղի, Բաթնիի, Ելզովանի, Սրալղի, Ակոու, Խաչափարաի, Հաչի-իլյազի, Մեհմանդարի, Ջանֆիդայի, Ջաֆարաբաղի (Արզավանդ), Հաչի-բեկուի, Ղամարուի (Արտաշատ), Դավալուի (Արարատ), Խոյլասարի, Եղվաբղի, Դվինի և բազմաթիվ այլ մեծ ու փոքր գյուղերի համայնքների վրա դրված հարկային պարտավորությունների մասին:

Կասկածից դուրս է, որ խնդրո առարկա վավերագրերի ճշգրիտ վերծանված գիտական բերնագրերի և դրանց թարգմանությունների՝ անհրաժեշտ ծանոթագրություններով օժտված հրապարակումները, մեծ չափով կարող են նպաստել նշված ժամանակաշրջանի և՛ սոցիալ-տնտեսական, և՛ քաղաքական պատմության առավել հանգամանալից հետազոտության կարոտ էական հարցերի լուսարանմանը: Այդպիսի աշխատանքներ արդեն իսկ նախատեսված են Մաշտոցի անվան Մատենադարանի առաջիկա տարիների գիտահետազոտական պլաններում:

Գիտական ավելի լայն շրջանակներին մատչելի դարձնելու նպատակով ստորև աղբյուրաչետ-պատմաբանների ուշադրության ենք ներկայացնում, մեզ արդեն ծանոթ, Երևանի բերդի 1724—1725 թթ. մուկաթիաների Արքունի դիվանին ներկայացված ելից և մտից ղեֆթերի թուրքերեն բնագրի յուրաքանչյուր վերծանությունն ու հայերեն թարգմանությունը: Կից տրվում է նաև վավերագրի նմանահանությունը, որը մի քանի անգամ փոքրացված լինելու պատճառով, առավել դժվարընթեքնելի լինելով հանդերձ, կարող է օգնել որոշակի զաղափար կազմելու այս կարգի հաշվառվածությունների և օսմանյան պետական գրասենյակային հաշվապահական համակարգի մասին:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱՋՅԱՆ

Մ ա տ յ ա ն

1137 և 1138 թթ. վերաբերող Երևանի մուկաթիաների

Երևանի մուհաֆիզ, մեծադգո Ռաջաբ փաշայի ծանուցմամբ, որ համապատասխանում է Երևանի ռուզնամչի Մուհամադ [էֆենդիի] և ղեֆդերդար Խուլեյման էֆենդիի [գրանցումներին] և գերագույն հրամանագրի բովանդակությամբ:

1139 թ. ուրբի I ամսի 12-ին (1726 թ. նոյեմբերի 7)

1137 թ. վերաբերող Երևանի մուկաթիաների եկամուտները
նախորդ մուհաֆիզ մեծադգո վեզիր Ահմադ փաշայի օրոք

Կըրիբուլաղի նահիայի մուկաթիան՝	9500	առյուծով
		զլոտա
Կարպիի նահիայի մուկաթիան՝	7000	»
Գառնիի նահիայի մուկաթիան՝	7700	»
Շարուրի նահիայի մուկաթիան՝	15000	»
Սուրմալուի և Արալղի նահիայի մուկաթիան՝	5400	»
Կոզբի աղահանքերի մուկաթիան՝	6000	»
Դարաշիշազի մուկաթիան՝	1500	»

Դարալազյազի մուկաթիան՝	3000	»
Սաղարակի մուկաթիան՝	380	»
Աղջաղալայի մուկաթիան՝	390	»
Գումար՝	55870	»
Երևանի դեֆթերդարի լիազոր Աղհամ Իբրահիմ	3000	»
Էֆենդիի ստացածը՝	52870	»
Երևանի դեֆթերդար Ահմադ Էֆենդիի բարաթով	7726	»
ստացածը՝	45144	»

1138 ք. վերաբերող Երևանի էյալերի մուկաթիւների եկամուտը
Երևանի մունաֆիզ, մեծարգո վեզիր Ռաջաբ փաշայի օրոք

Կըրիբուլազի մուկաթիան՝	14500	»
Կարպիի նահիայի մուկաթիան՝	13060	»
Գառնիի նահիայի մուկաթիան՝	11980	»
Շարուրի նահիայի մուկաթիան՝	8090	»
Սուրմալիի և Արալըզի մուկաթիան՝	29500	»
Դարալազյազի օջաքլըքի մուկաթիան՝	15500	»
Գյոզլայի օջաքլըքի մուկաթիան՝	18000	»
Աստապատի իւսաների մուկաթիան՝	37500	»
Նախչեանի կազայի մուկաթիան՝	20230	»
Դարաշիշազի մուկաթիան՝	2820	»
Շորագյալի մուկաթիան՝	1280	»
Աղջաղալայի մուկաթիան՝	1890	»
Կողբի աղահանքերի մուկաթիան՝	8100	»
Սաղարակի մուկաթիան՝	1850	»
Միրաբուլյան մուկաթիան՝	2000	»
Ներկատան և օճառատան մուկաթիան՝	900	»
Երևանի մաքսատան մուկաթիան՝	8500	»
Երևանի սպանդանոցի մուկաթիան՝	350	»
Ուլքիլիսայի (էջմիածին) մուկաթի մուկաթիան՝	350	»
Գումար՝	197370	»

Սիլահդարի ֆառուղար, հանգուղայ Մուհամադ Էֆենդիի
ձեռնով եկած քերթիկներից, 1137 ք. բաժանված ջիզայի քերթիկները՝

Վերին՝ 79 հատ	790	»
Միջին՝ 212 հատ	1060	»
Ստորին՝ 14026 հատ	35065	»

Ջոկդար Ահմադ-աղայի ձեռնով եկած,
սույն օրհնյալ տարում բաժանված քերթիկները՝

Վերին՝ 470 հատ	4700	»
Միջին՝ 480 հատ	2400	»
Ստորին՝ 27188 հատ	67980	»

Սիլահդարի քարտուղար Մուհամադ Էֆենդիի մա-
հից հետո Շարի դիտուլյամբ հաշիվները ստուգելիս
շարադվեց, որ նրա կողմից գանձված է՝

14608 »

Երևան քաղաքում, Միրիի կողմից վաճառված սե-
փականացանկի շուկանցով մուլքերի գինը 17521 »
Երևանի փողերանոցի կապալառուից 1138 թ. մու-
հառամ ամսի սկզբից մինչև նույն թվականի վերջը 10000 »
(1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28) 2050 »

Նախապես օրապահիկ (ուլուֆե) սրված լինելու
պատճառով, դարձ Մուհամադ-աղայի ձեռքով եկած
տեղի զինվորականության ոռնիկների [գումարից]
նրանց միայն 4451 դուրուշ, 1137 թ. զիհաջայի ամ-
սականը բաժանվեց, մնացյալ գումարը մուտք եղավ
Երևանի գանձատանը.

13317 »

412005 »

Մրանից՝ ներհոհիշյալ ծախսերը՝

Ըստ մայր մատյանի, բարձրագույն հրամանով
կափուկուկների տեղացի զինվորների (երկուներ) և
այլոց մսի, հացի և գարու հատկացումների համար,
1137 թ. սաֆարի 22-ից մինչև 1138 թ. սաֆարի վերջը
(1724 թ. նոյ. 10—1725 թ. նոյ. 6) 361 օր՝

34000 »

Ըստ հանդիպակաց մատյանի, տարբեր տոկոսնե-
րով, տեղացի զինվորականության ոռնիկների համար
1138 թ. մուհառամի սկզբից մինչև հիշյալ տարվա վեր-
ջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ. օգ. 28)՝

55551 »

Միրիի լեվենդների օրապահիկի (ուլուֆե) և հատ-
կացումների համար, 1138 թ. մուհառամի 15-ից մին-
չև 1138 թ. զիկա'դայի 15-ը (1725 թ. սեպտ. 23—
1726 թ. հուլիս 15) 10 ամիս, 400 հոգի՝

23639 »

Ըստ մայր մատյանի, Ղարսից գնված պաշարների,
Շորաղայի պահեստից Երևանի պահեստը տեղափոխե-
լու որսատների վարձի համար՝

12024 »

Բարձրագույն հրամանով, Երևանի օթեանի ու
կարավանատան համար, 1138 թ. մուհառամի սկզբից
մինչև նույն տարվա վերջը (1725 թ. սեպտ. 9—1726 թ.
օգ. 28)՝

200 »

Նասսեյի ճարտարապետ Մուստաֆա-աղայի ներ-
կայացած և կնքյալ մատյանով, իրանգակի փորման
և նոր զինանոցի ու պահակատների կառուցման, ճար-
տարապետի, որմնագրի, քարհատների և բանվորների
վարձի համար, 1137 թ. սաֆարի 22-ից մինչև 1138 թ.
զիհաջայի 11-ը (1724 թ. հոկտ. 11—1725 թ. օգ. 21)
110 օր՝

12413 »

Նանդակի փորելու և սլարիսպաներ կառուցելու հա-
մար, բանվորների, քարհատ վարպետների և հյուսնի
տրված վարձն ու երկաթագործների ծախսի ու կարիք-
ների գինը, 1138 թ. ռաբի II-ի 12-ից մինչև 1138 թ.
զիկա'դայի վերջը (1725 թ. գեկտ. 17—1726 թ. հուլ-
30)՝

25950 »

Հրետանու որոշ կարիքների ծախսի և պետական
պահեստների տեղեկագրերի համար՝

1200 »

Գումարը՝ 166777 »

Մնացյալը՝ Երևանի գանձատան առաքած մալը՝ 245228 »

Սրանից, գանձման բարձրագույն հրամանով, Երևանի գանձատնից
առաքվող մալի փոխանցումները՝

... ⁹ [Երևանի] բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների ռոճիկների հատուցման համար՝	10000	»
Թիֆլիսի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	10000	»
Թիֆլիսի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների ակչեի հատուցման համար՝	10521	»
Էրզրումի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. ձմեռային պաշարների գինը՝ 10 փարա	1116	»
Ձմեռային [կառիքների] գինը	451	»
	1567	»
Էրզրումի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	3182	»
Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	5000	»
Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	3863	»
Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	5000	»
Գորիի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	2913	»
Վանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի ենիչերիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	1789	»
«Պատճառ գրույս» 10 հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝	53841	»

Այնուհետև «պատճառ գրույս» և «արհունի օրհաշվի պատճենով»
կատարված փոխանցումներ

Երևանի բերդի պահպանության, բարձրագույն սեմի չեբեջիների 1138 թ. երրորդ և չորրորդ եռամսյակների ռոճիկների հատուցման համար՝	2000	»
Անատոլիի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային փոխանցելու համար, որը Թավրիզի վրալով գործուղված էր Համադանի ուղղությամբ առաջացող սարասկար Ահմեդ փաշայի մոտ, ինչպես նաև դեպի Գանձակ, 1139 թ. (1726—1727)	7500	»
Գումար՝	9500	»

* Բնագիրը պատված է:

Այնուհետև, բարձրագույն հրամանագրով կատարված փոխանցումներ

Անատոլիի վալի Մուստաֆա փաշայի ցուցմունքով, Սպահանի ուղղության մեծաքանակ զինվորականությանը կատարված անհրաժեշտ հատկացումների գծով, 1139 թ. նրանի էլալեթում պաշարներ գնելու համար՝

50600

Եւրին սրբություն, բարձրագույն սահրի աղաների աղա, Գուրդ Օսմանի վերակացությանը, Արդաբիլի էլալեթում ձեռք բերված պաշարների գնի [հատուցման] համար՝

25090

Համադանի և Ապահանի ուղղությանը նշանակված սարասկարի մոտ գործուղված, Անատոլիի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշայի ցուցմունքով, զինվորականության ռոճիկների հատկացումների գծով. պաշարների և անասունների գնի [հատուցման] համար, որի հաշիվ 1139 թ. տրված է էմին-ի նաղլ Բերահիմ աղային՝

25000

Գանձակի ուղղությանը սարասկար նշանակված, էրզրումի վալի, մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային ենթակա զինվորականության ամենօրյա անհրաժեշտ հատկացումների գծով, պաշարների գնի [հատուցման] և այլ կարևոր ծախսերի համար, գանձատան 1139 թ. փաստաթղթերով հանձնված է Գանձակի դեֆթերդարի լիազորին՝

25000

Գանձակի ուղղությանը սարասկար նշանակված մեծարգո վեզիր Մուստաֆա փաշային ենթակա, բարձրագույն սեմի ենիչերիների, ջեբեջիների, հրետանավորների և հրետանու սալապանների (արաբաջի), ինչպես նաև կոփի բերդի պահպանության բարձրագույն սեմի ջեբեջիների 1139 թ. ռոճիկների [հատուցման] համար՝

53469

Հինգ բարձրագույն հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝

178169 աուլուծով
դուրուշ

«Պատճառ գրույս», «արքունի օրհաշվի պատճենով» և բարձրագույն հրամանագրերով կատարված փոխանցումների գումարը՝

241810

Վերոհիշյալ փոխանցված գումարը ամբողջությամբ հատուցվելուց հետո, Երևանի գանձատան առկա մնացորդն է՝

2418

Երևանի մուհաֆիզ, մեծարգո վեզիր, հանգուցյալ Ռաջաբ փաշայի դեֆթերդար Մուլեյման էֆենդու և ռուզնամչի Մուհամադ էֆենդու կնիքներով կրնքված, նախապես առձանագրված մայր մատյանի համաձայն, 1137 և 1138 թթ. Երևանի գանձատան բուն եկամուտներից 160777 դուրուշ, Երևանի բերդի տեղական զինվորականության ռոճիկներից ու նախատեսված այլ ծախսերից բացի, Արքունի գանձատուն հանձնվելիք 245228 դուրուշի վերաբերյալ, նախապես սրբազան հրամանագիր էր ստացվել, որպեսզի ուղարկվի և հանձնվի գանձատուն, որից հետո, նշված ուղարկվելիք գումարից, այս կողմերում անցկացվող փոխադրումների վրա ծախսելու նպատակով, «պատճառ գրույս» հրամանագրերով, «արքունի օրհաշվի պատճենով» և բարձրագույն հրամանագրով 241810 դուրուշ, փոխանցումներով ուղարկվել է մատյանում գրանցված վայրերը, որից հետո գանձարկղում մնացել է 2418 դուրուշ, որի մասին և անհրաժեշտ համարվեց սույն պատճենը ներկայացնել։

1139 շավալի 17-ին (1727 թ. հունիս 7)

~~Handwritten scribbles and illegible text.~~

11. 11. 1911

[illegible]

Handwritten notes in Urdu script, likely bleed-through from the reverse side of the page.

~~اولی و دوم و سیم و چهارم و پنجم و ششم و هفتم و هشتم و نهم و دهم~~

Handwritten musical notation on a five-line staff, featuring various notes and rests.

Handwritten musical notation on a five-line staff, featuring various notes and rests.

٢٨٠

1999

سورة الاحقاف
سورة الاحقاف
سورة الاحقاف
سورة الاحقاف

۱۲۶۰
 ۱۲۶۱
 ۱۲۶۲
 ۱۲۶۳
 ۱۲۶۴
 ۱۲۶۵
 ۱۲۶۶
 ۱۲۶۷
 ۱۲۶۸
 ۱۲۶۹
 ۱۲۷۰
 ۱۲۷۱
 ۱۲۷۲
 ۱۲۷۳
 ۱۲۷۴
 ۱۲۷۵
 ۱۲۷۶
 ۱۲۷۷
 ۱۲۷۸
 ۱۲۷۹
 ۱۲۸۰
 ۱۲۸۱
 ۱۲۸۲
 ۱۲۸۳
 ۱۲۸۴
 ۱۲۸۵
 ۱۲۸۶
 ۱۲۸۷
 ۱۲۸۸
 ۱۲۸۹
 ۱۲۹۰
 ۱۲۹۱
 ۱۲۹۲
 ۱۲۹۳
 ۱۲۹۴
 ۱۲۹۵
 ۱۲۹۶
 ۱۲۹۷
 ۱۲۹۸
 ۱۲۹۹
 ۱۳۰۰
 ۱۳۰۱
 ۱۳۰۲
 ۱۳۰۳
 ۱۳۰۴
 ۱۳۰۵
 ۱۳۰۶
 ۱۳۰۷
 ۱۳۰۸
 ۱۳۰۹
 ۱۳۱۰
 ۱۳۱۱
 ۱۳۱۲
 ۱۳۱۳
 ۱۳۱۴
 ۱۳۱۵
 ۱۳۱۶
 ۱۳۱۷
 ۱۳۱۸
 ۱۳۱۹
 ۱۳۲۰
 ۱۳۲۱
 ۱۳۲۲
 ۱۳۲۳
 ۱۳۲۴
 ۱۳۲۵
 ۱۳۲۶
 ۱۳۲۷
 ۱۳۲۸
 ۱۳۲۹
 ۱۳۳۰
 ۱۳۳۱
 ۱۳۳۲
 ۱۳۳۳
 ۱۳۳۴
 ۱۳۳۵
 ۱۳۳۶
 ۱۳۳۷
 ۱۳۳۸
 ۱۳۳۹
 ۱۳۴۰
 ۱۳۴۱
 ۱۳۴۲
 ۱۳۴۳
 ۱۳۴۴
 ۱۳۴۵
 ۱۳۴۶
 ۱۳۴۷
 ۱۳۴۸
 ۱۳۴۹
 ۱۳۵۰
 ۱۳۵۱
 ۱۳۵۲
 ۱۳۵۳
 ۱۳۵۴
 ۱۳۵۵
 ۱۳۵۶
 ۱۳۵۷
 ۱۳۵۸
 ۱۳۵۹
 ۱۳۶۰
 ۱۳۶۱
 ۱۳۶۲
 ۱۳۶۳
 ۱۳۶۴
 ۱۳۶۵
 ۱۳۶۶
 ۱۳۶۷
 ۱۳۶۸
 ۱۳۶۹
 ۱۳۷۰
 ۱۳۷۱
 ۱۳۷۲
 ۱۳۷۳
 ۱۳۷۴
 ۱۳۷۵
 ۱۳۷۶
 ۱۳۷۷
 ۱۳۷۸
 ۱۳۷۹
 ۱۳۸۰
 ۱۳۸۱
 ۱۳۸۲
 ۱۳۸۳
 ۱۳۸۴
 ۱۳۸۵
 ۱۳۸۶
 ۱۳۸۷
 ۱۳۸۸
 ۱۳۸۹
 ۱۳۹۰
 ۱۳۹۱
 ۱۳۹۲
 ۱۳۹۳
 ۱۳۹۴
 ۱۳۹۵
 ۱۳۹۶
 ۱۳۹۷
 ۱۳۹۸
 ۱۳۹۹
 ۱۴۰۰
 ۱۴۰۱
 ۱۴۰۲
 ۱۴۰۳
 ۱۴۰۴
 ۱۴۰۵
 ۱۴۰۶
 ۱۴۰۷
 ۱۴۰۸
 ۱۴۰۹
 ۱۴۱۰
 ۱۴۱۱
 ۱۴۱۲
 ۱۴۱۳
 ۱۴۱۴
 ۱۴۱۵
 ۱۴۱۶
 ۱۴۱۷
 ۱۴۱۸
 ۱۴۱۹
 ۱۴۲۰
 ۱۴۲۱
 ۱۴۲۲
 ۱۴۲۳
 ۱۴۲۴
 ۱۴۲۵
 ۱۴۲۶
 ۱۴۲۷
 ۱۴۲۸
 ۱۴۲۹
 ۱۴۳۰
 ۱۴۳۱
 ۱۴۳۲
 ۱۴۳۳
 ۱۴۳۴
 ۱۴۳۵
 ۱۴۳۶
 ۱۴۳۷
 ۱۴۳۸
 ۱۴۳۹
 ۱۴۴۰
 ۱۴۴۱
 ۱۴۴۲
 ۱۴۴۳
 ۱۴۴۴
 ۱۴۴۵
 ۱۴۴۶
 ۱۴۴۷
 ۱۴۴۸
 ۱۴۴۹
 ۱۴۵۰
 ۱۴۵۱
 ۱۴۵۲
 ۱۴۵۳
 ۱۴۵۴
 ۱۴۵۵
 ۱۴۵۶
 ۱۴۵۷
 ۱۴۵۸
 ۱۴۵۹
 ۱۴۶۰
 ۱۴۶۱
 ۱۴۶۲
 ۱۴۶۳
 ۱۴۶۴
 ۱۴۶۵
 ۱۴۶۶
 ۱۴۶۷
 ۱۴۶۸
 ۱۴۶۹
 ۱۴۷۰
 ۱۴۷۱
 ۱۴۷۲
 ۱۴۷۳
 ۱۴۷۴
 ۱۴۷۵
 ۱۴۷۶
 ۱۴۷۷
 ۱۴۷۸
 ۱۴۷۹
 ۱۴۸۰
 ۱۴۸۱
 ۱۴۸۲
 ۱۴۸۳
 ۱۴۸۴
 ۱۴۸۵
 ۱۴۸۶
 ۱۴۸۷
 ۱۴۸۸
 ۱۴۸۹
 ۱۴۹۰
 ۱۴۹۱
 ۱۴۹۲
 ۱۴۹۳
 ۱۴۹۴
 ۱۴۹۵
 ۱۴۹۶
 ۱۴۹۷
 ۱۴۹۸
 ۱۴۹۹
 ۱۵۰۰
 ۱۵۰۱
 ۱۵۰۲
 ۱۵۰۳
 ۱۵۰۴
 ۱۵۰۵
 ۱۵۰۶
 ۱۵۰۷
 ۱۵۰۸
 ۱۵۰۹
 ۱۵۱۰
 ۱۵۱۱
 ۱۵۱۲
 ۱۵۱۳
 ۱۵۱۴
 ۱۵۱۵
 ۱۵۱۶
 ۱۵۱۷
 ۱۵۱۸
 ۱۵۱۹
 ۱۵۲۰
 ۱۵۲۱
 ۱۵۲۲
 ۱۵۲۳
 ۱۵۲۴
 ۱۵۲۵
 ۱۵۲۶
 ۱۵۲۷
 ۱۵۲۸
 ۱۵۲۹
 ۱۵۳۰
 ۱۵۳۱
 ۱۵۳۲
 ۱۵۳۳
 ۱۵۳۴
 ۱۵۳۵
 ۱۵۳۶
 ۱۵۳۷
 ۱۵۳۸
 ۱۵۳۹
 ۱۵۴۰
 ۱۵۴۱
 ۱۵۴۲
 ۱۵۴۳
 ۱۵۴۴
 ۱۵۴۵
 ۱۵۴۶
 ۱۵۴۷
 ۱۵۴۸
 ۱۵۴۹
 ۱۵۵۰
 ۱۵۵۱
 ۱۵۵۲
 ۱۵۵۳
 ۱۵۵۴
 ۱۵۵۵
 ۱۵۵۶
 ۱۵۵۷
 ۱۵۵۸
 ۱۵۵۹
 ۱۵۶۰
 ۱۵۶۱
 ۱۵۶۲
 ۱۵۶۳
 ۱۵۶۴
 ۱۵۶۵
 ۱۵۶۶
 ۱۵۶۷
 ۱۵۶۸
 ۱۵۶۹
 ۱۵۷۰
 ۱۵۷۱
 ۱۵۷۲
 ۱۵۷۳
 ۱۵۷۴

$\frac{1}{2} \times \frac{1}{2} = \frac{1}{4}$

گزارش و خبر
کتابخانه

۱۰۰۰
 ۱۰۰۰
 ۱۰۰۰

—

[illegible]

[Faint handwritten notes at the bottom of the page]

—

100

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.

Handwritten musical notation on a staff.



دفتر مقاطعات ایالت روان واجب سنه ۱۱۳۷ و سنه ۱۱۳۸ بر موجب
اعلام وزیر مکرم رجب باشا محافظ روان ۰۰۰ رانه دفتر محمد روزنامچی
روان و سلیمان افندی دفتر دار روان و تلخیص شرمانعالی فی سنه ۱۱۳۹

ایراد مقاطعات ایالت روان در زمان محافظ سابق وزیر مکرم
احمد باشا واجب سنه ۱۱۳۷

مقاطعة قرق بولاق	۹۵۰۰	زولت اسدی
مقاطعة ناحیه کربی	۷۰۰۰	" "
مقاطعة ناحیه کارنی	۷۷۰۰	" "
مقاطعة ناحیه شرور	۱۵۰۰۰	" "
مقاطعة ناحیه سورملو و ارهلق	۵۴۰۰	" "
مقاطعة مملحه قلب	۶۰۰۰	" "
مقاطعة دره جیجک	۱۵۰۰	" "
مقاطعة دره الاکر	۳۰۰۰	" "
مقاطعة صدرک	۳۸۰	" "
مقاطعة افجه قلعه	۳۹۰	" "
یکون	۵۵۸۷۰	" "
مقبوضی ادهم ابراهیم افندی وکیل دفتر دار	۳۰۰۰	" "
روان	۵۲۸۷۰	" "
مقبوضی براتی احمد افندی دفتر دار روان	۷۷۲۶	" "
	۴۵۱۴۴	" "

ایراد مقاطعات ایالت روان در زمان وزیر مکرم رجب باشا
محافظ روان واجب سنه ۱۱۳۸

مقاطعة قرق بولاق	۱۴۵۹۰	زولت اسدی
مقاطعة ناحیه کربی	۱۳۰۶۰	" "
مقاطعة ناحیه کارنی	۱۱۹۸۰	" "

"	"	8000	مقاطعة ناحية شرور
"	"	29500	مقاطعة سرملی و ارهلق
"	"	10000	مقاطعة دره الاكر او جقلو
"	"	18000	مقاطعة كوكچه او جقلو
"	"	27500	مقاطعة حواس یزدآباد
"	"	20220	مقاطعة قضاء سنجوان
"	"	2820	مقاطعة دره چيچك
"	"	1280	مقاطعة شوره كل
"	"	1800	مقاطعة اقچه قلعه
"	"	8100	مقاطعة مملحه قلاب
"	"	1850	مقاطعة صدرک
"	"	3000	مقاطعة میرابلق
"	"	900	مقاطعة بويه حانه و صابونخانه
"	"	8500	مقاطعة کيرک روان
"	"	250	مقاطعة قصاخانه روان
"	"	250	مقاطعة مقطوع اوج کليسا
"	"	19320	يكون

سلحدار کاتبی متوفی محمد افندی یدیلہ کلان اوراقدن یوز
اوتوزیدی سنده سنده توزیع اولنان جزیه اوراقی

زولت اسدی	790	اعلا - 79 عدد
" "	1060	اوسط - 212 عدد
" "	25060	ادنی - 14026 عدد

خوئدار احمد اغا یدیلہ کلان اوراقدن اشوسنه مبارکده
توزیع اولنان اوراقی

زولت اسدی	4700	اعلا - 470 عدد
" "	2400	اوسط - 2400 عدد
" "	77980	ادنی - 27188 عدد

		سلحدار کاتبی محمدآقندی فوت اولوب معرفت شرعله حاجی کورلرکن ذمتنده ظهور ایدوب مقبوضی اولان
۱۴۶۰۸	غروش اسدی	مدینه روانده میریدن فروخت اولنان بلاصاحب
۱۷۵۲۱	" "	املاک میری بهاسی اولمق اوزره
		نخچوانده طرف میریدن فروخت اولنان بلا
۱۰۰۰۰	" "	صاحب املاک بهاسی اولمق اوزره
۲۰۵۰	" "	قالبض ضریخانه روان واجب عن غره محرم سنه ۱۱۳۸ الی غایه سنه مزبور
		زعیم قره محمدآقای دیله یرلو نفراتلرینک مواجبی کلدکدن نفرات مذکوره نک علوفه لری مقدم ویرلمش بولنوب فقط اوتوزیدی ذی الحجه آیلغنه مستحق اولنلریله درت بیک درتیوزاللی برغروش برآیلق علوفه لری توزیع وقتیلله قالبوب روان
۱۳۳۱۷	" "	خرینه سنه ایراد اولان
۴۱۳۰۰۵	" "	یکون

منها مصارف مذکورین

		برای تعیینات گوشت و نان و شعیر قبوقولی و یرلویان و سائره با امر عالی بر موجب مفردات بی ۲۲ ص سنه ۱۱۳۷ الی غایه ص سنه ۱۱۳۸
۳۴۰۰۰	" "	ایام - ۳۶۱
		برای مواجب نفرات یرلویان یا فوارع مختلفه بر موجب دفتر مقابله عن غره محرم سنه ۱۱۳۸ الی غایه سنه مزبور
۵۵۵۵۱	" "	برای علوفه و تعیینات لپندان میری عن ۱۵ محرم سنه ۱۱۳۸ الی ۱۵ د سنه ۱۱۳۸ - ۱۰ شهر
۲۳۶۳۹	" "	- ۴۰۰ نفر
		برای اجرت مکاری درنفل نخا یرمبا یعه قاری عن انبار شوره کل الی انبار روان بر موجب دفتر مفردات
۱۲۰۲۴	" "	

- برای منزل روان و کارهای برای سال مرعالی عن
 غره محرم سنه ۱۱۳۸ الی غایه سنه مزبور ۲۰۰۰
 برای اجرت معمار و بنا و ظاهر کن و رنجبران
 در حفر خندق و بناء چیه خانه جدید و قراولخانه
 ها با معرفت معمار خاصه مصطفی اغا و یاقوت
 ممبور عن ۲۲ ص سنه ۱۱۳۷ الی ۱۱ سنه ۱۱۳۸
 ایام ۱۱۰ ۱۲۴۱۳
 برای اجرت رنجبران و طاشچیان و نغار و بهاء
 خرج و لازمه آهنکراں در حفر خندق و بناء دیوارها
 عن ۱۲ ر سنه ۱۱۳۸ الی غایه سنه ۱۱۳۸ - ایام
 ۲۵۱- ۲۵۹۵۰
 برای مصارف بعض لازمه طویخانه و تقریرات میری ۱۲۰۰
 ۱۱۶۷۷۷ یکون
 الباقی مال ارساله خزینة روان ۲۵۵۳۲۸

منها الحوالات عن مال ارساله خزینة روان با حکم سنه تحریر

- برای اداء مواجب یکجریان درگاه عالی در
 محافظه قلعه روان ... ۱۰۰۰۰ زولت اسدی
 برای اداء مواجب یکجریان درگاه عالی در
 محافظه قلعه نعلیس واجب رشن لذ سنه ۱۱۳۸ " " ۱۰۰۰۰
 برای اداء ایجه مواجب یکجریان درگاه عالی در
 محافظه قلعه نعلیس واجب رشن لذ سنه ۱۱۳۸ " " ۱۰۵۲۱
 برای تخیر بهاء زمستانی یکجریان درگاه
 عالی در محافظه قلعه ارض روم واجب سنه ۱۱۳۸
 ۱۰۱۱۶ - ۱۰۱۱۶
 ۴۵۱ بهاء زمستانی
 ۱۵۶۷

برای اداء مواجب یکجریان درگاه عالی در
 محافظه قلعه ارض روم واجب مصر ریح رشن لذ

50000	زولت اسدی	جانب اصفهان بامعینه مصطفی باشا والی اناطولی در سنه ۱۱۳۹
25000	" "	برای بهایه نخایری جانب ایلالت ارمبیل و بمباشرت کورد عثمان اغا اعیان حضرت صدر عالی در سنه ۱۱۳۹
25000	" "	برای بهایه نخایری اعیان برای تعیینات موجب عسکریه که بامعینه وزیرمکرم مصطفی باشا والی اناطولی به نزد سرعسکر همدان و اصفهان مأمورشدگان در سنه ۱۱۳۹ تسلیم به ابراهیم اغا امین نزل
25000	" "	برای بهایه نخایری لازمه تعیینات روزمره طوایف عسکریه در نزد وزیرمکرم مصطفی باشا والی ارض روم سرعسکر جانب کنجه و مهارف مهمه سایر به وکیل دفتر دارکنجه با تسلیم سند خزینه در سنه ۱۱۳۹
03469	" "	برای موجب یکجریان و جبهجیان و طوبجیان و عربجیان طوب درگاه عالی در نزد وزیرمکرم مصطفی باشا سرعسکر جانب کنجه و جبهجیان درگاه عالی در محافظه قلعه لوری واجب سنه ۱۱۳۹
۱۷۸۴۶۹	غروش اسدی	یکون بش قطعه و امر علیه ایل حواله اولنان یکون سبب تحریر احکامی و صورت روزنامه همایون و امر علیه ایل حواله اولنان
241810	" "	الباقی حواله اولنان مبلغ مزبور با جمله ادا اولند قدیم موجود خزینه روان اقتضا ایدن

روان محافظی متوفی وزیر مکرم رجب باشا نیک و دفتر دار سلیمان
افندی و روزنامه محمدافندی نیک مهملر علیه مقدم کلوب قید
اولنان مفردات دفتر موجب بیک یوزا و توزیدی و یوزا و توز سکر
سنه لری روان خزینه سینک اصل حاصل اولان ایرادنک روان قلعه سی
یرلو نفراتی موجب و سایر مصارف مقیره اوزره یوزا التمس التی بیک
یدیوز یتتمیش یدی غروشدن غیری خزینه عامر به ارساله اقتضا ایدن

ایکیبوز قرق بش بیک ایکیبوز یگر می سکز غروش استانه خزینه سنه ارسال
و تسلیم خزینه ایتدر لک اوزره بوندن اقدام امر عرف کو تدر لمشیدی
بعده ارساله اقتضا ایدن مبلغ مزبور بو طرفه کلمش عبرونقله مصرف
اقتضا ایلمکله سبب تحریر احکامی و صورت روزنامه هما یون و او امر
علیه موجبینجه دفتر اولنان محللره ایکیبوز قرق بر بیک سکز یوز اون
غروش حواله اولنقله ادا و تسلیم اولندقدن صکره [ایکی بیک در تیوز]
اون سکز غروش یخی موجود خزینه اولحق لازم کلمکده اشبو صورت ورلدی
فی ۱۷ شوال ۱۱۳۹ [امضاء]

ОСМАНСКИЕ АРХИВНЫЕ ДОКУМЕНТЫ
НАРОДНОЙ БИБЛИОТЕКИ КИРИЛЛА И МЕФОДИЯ В СОФИИ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

Резюме

В архивном фонде Восточного отдела Народной библиотеки Кирилла и Мефодия— крупнейшего культурного центра Болгарии, хранятся несколько сот тысяч архивных османских документов XVI—XIX вв.; в последнее десятилетие они привлекают к себе пристальное внимание источниковедов. Среди документов, касающихся различных стран, подчиненных Османской империи, в этом фонде около 30.000 имеют отношение к Армении и являются ценнейшими первоисточниками по истории политической, социально-экономической и общественной жизни Армении указанного периода. В настоящей статье вкратце излагаются результаты нашего исследования, проведенного в архиве Восточного отдела библиотеки во время научной командировки 1982 г. В архивном фонде хранятся также более тысячи документов, относящихся ко времени оккупации Закавказья турецкими войсками в 20—30-х гг. XVIII в. К статье прилагается полная расшифровка и армянский перевод турецкого текста отчета о доходах и расходах Ереванской крепости, отправленного в 1724—25 гг. в главное финансовое ведомство— Верховный Диван—командованием турецкими оккупационными войсками.